ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ա. Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Կոմիտասի ավագ աշակերտը՝ Սպիրիդոն Մելիքյանը, այս դարասկզբին ասպարեզ մտած այն ականավոր երաժիշտներից է, որ իր բազմակողմանի գործունեությամբ ծառայել է հայ պրոֆեսիոնալ երաժշտության նոր խնդիրների լուծմանը։

Կարա Մուրզայի, Եկմալյանի, Կոմիտասի օրինակով Մելիքյանը իր ստեղծագործական ուժերը ի հայտ բերեց երաժշտական ամենատարբեր ոլորտներում, լայն ճանաչման արժանանալով հայ իրականության մեջ որպես խմբավար և ազգագրագետ, երաժշտական տեսաբան և կոմպոզիտոր, մանկավարժ և հասարակական գործիչ։ Մելիքյանին մշտապես հետաքրքրել են հայ երաժշտության պատմության և տեսության պրոբլեմները, երաժշտական ֆոլկլորի հավաքումը, ձայնագրումը և ուսումնասիրությունը։ Առանձնապես մեծ է եղել նրա վաստակը հայ երաժշտական ազգագրության ասպարեզում։ Այդ են վկայում նրա թողած ազգագրական ժողովածուները, որ բովանդակում են հինավուրց ավանդույթներ ունեցող հայ ժողովրդական երաժշտության տարբեր ժանրերը ներկայացնող հետաքրքրական և արժեքավոր գրառումներ։ Մելիքյանը անսպառ եռանդով նվիրվել է երաժշտական կրթության ու լուսավորության տարածմանը, եղել է ժամանակի ամենահմուտ խմբավարներից մեկը, որ հիանալիորեն յուրացրել էր Կոմիտասի կատարողական ավանդույթները։ Արտակարգ բեղմնավոր էին Մելիքյանի կյանքի վերջին տարիները, որ անցան Սովետական Հայաստանի մայրաքաղաքում։ Նա մեր երիտասարդ հանրապետության կուլտուրայի ամենաժրաջան ուժերից էր, որ գործուն մասնակցություն ուներ օրեցօր ծավալվող սովետահայ երաժշտական կյանքին։

Սպիրիդոն Ավետիսի Մելիքյանը ծնվել է Էջմիածնում, 1880 թ. դեկտեմբերի 1-ին (հին տոմարով նոյեմբերի 18-ին), ուսուցչի ընտանիքում։ Դեռևս վաղ մանկության տարիներին նա զրկվում է ծնողներից, ապրում հորեղբոր և մորեղբոր խնամքի տակ։ Տասներեք տարեկան Սպիրիդոնը դառնում է Գևորգյան ճեմարանի սան և իր երաժշտական ընդունակությունների շնորհիվ արժանանում ճեմարանի երգեցողության ուսուցչի ու խմբավարի՝ մեծ Կոմիտասի ուշադրությանը։ Շատ շուտով նա տիրապետում է նոտագրությանը, ուսման մեջ աչքի ընկնում արտակարգ առաջադիմությամբ։ Երաժշտական ձիրքով օժտված աշխատասեր ու պարկեշտ պատանին դառնում է Կոմիտասի ամենասիրելի աշակերտը։

Վերհիշելով այդ տարիները, Սպիրիդոնի դասընկերներից մեկը, ճանաչված մանկավարժ Սիմակ Սահակյանը հետևյալն է գրել. «Սպիրիդոն Մելիքյանին ճանաչում էի 1895 թվականից, երբ նույն դասարանի աշակերտներ էինք Գևորգյան ճեմարանում։ Սպիրիդոնը լիքը մարմնով, միջահասակ, լայնաթի-

կունք, տափակ դեմքով մի պատանի էր։ Ես և Սպիրիդոնը մտերիմ էինք, լավ էինք հասկանում միմյանց։ Ես թեև անմշակ, բայց կոպիտ և ուժեղ ձայն ունեի, իսկ Սպիրիդոնը շատ մեղմ, դուրեկան և քնքուշ ձայն ուներ։ Նա թե՛ ազգային-ժողովրդական երգեր, թե՛ շարականներ, շատ լավ էր երգում և 5-րդ դասարանից սկսած դասապետ էր, այսինքն աշակերտական այն խմբի ղեկավարը, որ եկեղեցու մի դատում երգում էր եկեղեցական բոլոր երգերը։ Զարմանալի համեստ ու ընկերասեր էր նա. աշխատասեր, համբերատար։ Նրա աշխարհը երգն ու երաժշտությունն էր։ 1899 թվականին, երբ արտասահմանից վերադարձավ Կոմիտասը, մեր Սպիրիդոնի աստղը պայծառացավ. ոչ միայն նա, այլ ամենքս հասկացանք, որ մեր ընկերը մեծ շնորհքի տեր է և ապագա աչքի ընկնող երաժիշտ»[1]։

Սպիրիդոն Մելիքյանի՝ ապագա երաժշտի ձևավորման վրա Կոմիտասը մեծ ազդեցություն է ունեցել։ Դեռևս ուսման տարիներին Սպիրիդոնն սկսում է իր ուսուցչի օրինակով զբաղվել ժողովրդական երգերի ձայնագրմամբ, այդ նպատակով արձակուրդի ամիսներն անցկացնելով Էջմիածնի և Ապարանի գյուղերում։ Կոմիտասը ուշիուշով հետևել է իր շնորհալի սանի ընդհանուր և մասնագիտական առաջադիմությանը, նրա գիտելիքների հարստացմանը, ճաշակի զարգացմանը, աջակցել նրան՝ յուրացնելու խմբավարական արվեստի առանձնահատկություններն ու բազում գաղտնիքները։

1902 թ. Մելիքյանն ավարտում է ճեմարանի դասընթացը, ստանալով սարկավագի հոգևոր կոչում, այստեղ էլ նա նշանակվում է երգեցողության ուսուցիչ և միաժամանակ դառնում Կոմիտասի օգնականը (ասիստենտը) ճեմարանական երգչախմբում։ Երկու տարի ճեմարանում աշխատելուց հետո Մելիքյանը Ղուկասյան կտակի հաշվին մեկնում է Բեռլին՝ երաժշտական բարձրագույն կրթություն ստանալու։ Այդ գաղափարը հղացել էր Կոմիտասը, որ մտահոգված էր իր աշակերտի մասնագիտական հետագա կատարելագործման հարցով։ Սակայն Կոմիտասը նախազգուշացնում էր նրան, որ չտարվի գերմանական երաժշտագիտության ասպարեզում գոյություն ունեցող սխոլաստիկ ուղղություններով։ Հենց այդ նպատակով է, որ նա իր աշակերտին է տրամադրում հայ ժողովրդական երգերի իր ստվար ժողովածուն՝ արտագրելու և հետը վերցնելու համար։ Կոմիտասյան ժողովածուն այն հավաստի ու հարուստ աղբյուրն էր, որից մշտապես օգտվելով, երիտասարդ Մելիքյանը պիտի կարողանար ճիշտ կողմնորոշվել իր ստեղծագործական և գիտաուսումնասիրա-

[1] Սպիրիդոն Մելիքյան, Հոդվածներ, հուշեր, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1964, էջ 71—72։

կան որոնումներում։ Ինչպես հայտնի է, կոմիտասյան հիշյալ հազվագյուտ ժողովածուն պահպանվել է հենց Մելիքյանի ջանքերով։ Ըստ արտագրված օրինակի այն հրատարակվեց 1931-ին՝ Մելիքյանի առաջաբանով։

Բեռլինում Մելիքյանը հետզհետե խորացնում է իր երաժշտատեսական դիտելիքները, ուսումնասիրում հին ու նոր երաժշտության պատմությունը, շարունակում է մշակել իր ձայնը և հմտանալ խմբավարական արվեստում։ Կոմպոզիցիայի գծով նա աշակերտում է Ռ. Շմիդտին, երաժշտության պատմության գծով՝ Օ. Ֆլայշերին և Հ. Կրեչմարին, իսկ խմբավարության գծով՝ Զ. Օքսին։ Որպես ավարտական աշխատանք Մելիքյանը ներկայացնում է «Ախթամար» վոկալ-սիմֆոնիկ պոեմը՝ գրված խառն երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար, ըստ Հ. Թումանյանի համանուն լեգենդի։

Հայրենիք վերադառնալով երաժշտական-մասնագիտական գիտելիքներով զինված, Մելիքյանը որոշում է ամբողջապես նվիրվել երաժշտական ասպարեզին և ընդմիշտ խզել իր կապերը եկեղեցու հետ։ Գ. Սուրենյանին ուղղված իր դիմումում նա հրաժարվում է սարկավագի հոգևոր կոչումից։ Դա մի համարձակ քայլ էր այն ժամանակվա պայմաններում, որ արտացոլում էր հայ երիտասարդի հայացքներում և աշխարհըմբռնման մեջ առաջ եկած խոր բեկումը։ Մելիքյանի այդ հրաժարական դիմումում ասված է. «Մոտ չորս տարի արտասահմանում երաժշտական արվեստի մեջ կատարելագործվելուց հետո այժմ ինձ համար անկարելի է դառնում կրկին վանք վերադառնալ իբրև կուսակրոն հոգևորական։ Դեռ 21 տարին չլրացած, մի հասակում, երբ դեռ կյանքն ու աշխարհն իր բարիքներով անծանոթ էր ինձ, ես մի ահավոր ուխտ ուխտեցի, մի հանդուգն անձնազոհությամբ. ուխտեցի արհամարհել աշխարհը իր բարիքներով, քամահրեցի սրբազան սերը և նահատակի մի անուն առած, ճգնավորի վերարկուն հագած, վանք քաշվեցի՝ նրան նվիրվելու համար։

Այժմ, սրբազան հայր, իրերը բոլորովին կերպարանափոխվել են, որովհետև ինքս այժմ այլ կերպ եմ տեսնում և այլ կերպ դատում, քան այն ժամանակ... Ես ստիպված եմ հենց այժմվանից թողնել այդ կյանքը և մի նոր կյանք որոնել, մանավանդ, որ իմ լինել-չլինելը հոգևոր դասի համար մի առանձին նշանակություն չունի։ Ես միայն և միայն երաժշտությամբ պիտի զբաղվեմ»[2]։

Էջմիածինը հալածանք սկսեց Մելիքյանի դեմ, նրան համարելով դավաճան։ Ի վերջո մայր աթոռը Մելիքյանին ազատ համարեց սարկավագությունից և որոշում ընդունեց մաս-մաս ետ գանձել նրանից այն ամբողջ գումարը, որ հատկացվել էր արտասահմանյան ուսումնառության ընթացքում։

1909 թ. Մելիքյանը հաստատվում է Թիֆլիսում՝ դառնալով Ներսիսյան դպրոցի երաժշտության ուսուցիչ և խմբավար։ Նույն թվականին Թիֆլիսում լույս է տեսնում Մելիքյանի գրքույկը՝ «Երաժշտության զարգացման խնդիրը մեզանում», որտեղ հեղինակը անդրադառնում է հայ պրոֆեսիոնալ երաժշտության վիճակին և զարգացման հեռանկարներին, հայրենի երգարվեստի տարածման հարցերին, աճող սերնդի երաժշտական դաստիարակության պրոբլեմներին։ Այստեղ Մելիքյանը հատկապես նշում է, որ դպրոցական ծրագրերում հայ ժողովրդական երգին արժանի տեղ պետք է հատկացվի։ Նա գտնում է, որ ժողովրդական երգարվեստի նմուշների միջոցով կարելի կլինի ճիշտ հունով զարգացնել մանկան երաժշտական լսողությունը և ունակությունները։

---

2 Նույն տեղում, էջ 182։

Մելիքյանն այնուհետև առաջ է քաշում երաժշտական ընկերությունների և դրանց կից երգչախմբերի ստեղծման անհրաժեշտության հարցը։

Հայ երաժշտական կյանքի ինտենսիվացման այդ ծրագրից էր բխում նաև Մելիքյանի կարևոր նախաձեռնությունը՝ Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության կազմակերպումը 1912 թ.։ Մինչ այդ Թիֆլիսում գոյություն ուներ այսպես կոչված «երաժշտական լիգան», որ գործեց մոտավորապես 3 տարի (1908—1910 թթ.)։ Սակայն նրա ղեկավարի՝ Ռոմանոս Մելիքյանի Պետերբուրգ մեկնելուց հետո լիգան շուտով իր աշխատանքը դադարեցրեց։ Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության ստեղծումը, այսպիսով, հասունացած հարց էր։ Նրա նախաձեռնողների թվում էին, բացի Ս. Մելիքյանից, Մ. Միրզոյանը, Հ. Հովհաննիսյանը, Մ. Վարդիկյանը, Գ. Երիցյանը։ Ընկերությունը մշակեց իր կանոնադրությունը և աշխատանքային ծրագիրը։

Սպիրիդոն Մելիքյանը այդ ընկերության ամենագործունյա և ամենակենտրոնական դեմքը դարձավ։ Երաժշտական ընկերության աշխատանքների մեջ էին ներգրավված հայ պրոֆեսիոնալ երաժիշտ-կատարողներ, կոմպոզիտորներ և երաժշտագետներ, այդ թվում՝ Ա. Տիգրանյանը, Ս. Բարխուդարյանը, Գ. Սյունին, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ա. Մանուկյանը, Մ. Միրզոյանը, Հ. Տեր-Դավթյանը, ավելի ուշ՝ Ռ. Մելիքյանը, Բ. Ամիրջանը, Տ. Նալբանդյանը և ուրիշներ։ Երաժշտական ընկերության ջանքերով պարբերաբար անցկացվող խառն համերգները Թիֆլիսի երաժշտական կյանքում նկատելի աշխուժություն առաջացրին։ Բացի համերգներից, ընկերությունը մի շարք կարևոր նախաձեռնություններ ունեցավ։ Դրանց թվում պետք է հիշատակել ռոմանսների և մանկական երգերի մրցանակաբաշխությունը (1913 թ.), ապա՝ Շիրակի ազգագրական էքսպեդիցիան (1914 թ.), որին մասնակցեցին Ս. Մելիքյանը և Ա. Տեր-Ղևոնդյանը։

1916 թ. ընկերության վարչության հրավերով Ղրիմից Թիֆլիս մեկնեց հայ նշանավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը։ Ընկերությունը, Սպենդիարյանին Թիֆլիս հրավիրելով, նպատակ ուներ նրան ավելի սերտորեն կապել հայ իրականությանը և երաժշտական կյանքին, օգնել նրան՝ ընտրելու համապատասխան օպերային սյուժե։ Թիֆլիսում Սպենդիարյանը հանդիպումներ ունեցավ Հովհաննես Թումանյանի, հայ պրոֆեսիոնալ երաժիշտների հետ, ունկնդրեց հայ ժողովրդական և աշուղական բազմաթիվ երգեր։ 1916-ի մարտի 27-ին տեղի ունեցավ Սպենդիարյանի հեղինակային մեծ համերգը, որ արտակարգ ջերմ ընդունելության արժանացավ։ Նույն տարվա վերջին Սպենդիարյանը երկրորդ անգամ այցելեց Թիֆլիս։

Այդ տարիներին նույնքան արդյունավետ էր և Մելիքյանի խմբավարական աշխատանքը Ներսիսյան դպրոցում։ Այստեղ, նրա ղեկավարած երգչախումբը շարունակեց այն հիանալի ավանդույթները, որ կյանքի էին կոչել Մակար Եկմալյանը, ապա և Գրիգոր Սյունին։ Սպիրիդոն Մելիքյանի երգչախմբային համերգներն անցնում էին բացառիկ հաջողությամբ։ Մելիքյանն իր սաների հոգատար դաստիարակն էր, որ մշտապես հետևում էր նրանց երաժշտական ընդհանուր զարգացմանը։ Նա չէր բավարարվում երգչախմբային փորձերով, զբույցներ էր անցկացնում երաժշտական ամենատարբեր թեմաներով, սաներից առավել շնորհալիներին վարժեցնում խմբավարության արվեստին։ Եվ պատահական չէ, որ Մելիքյանի լավագույն աշակերտները (Շարա Տալյան, Կ. Զա-

քարյան, Ա. Տեր-Աբրահամյան, Մ. Մազմանյան և ուրիշներ) հետագայում դարձան պրոֆեսիոնալ երաժիշտներ՝ արժանանալով լայն ճանաչման։

Ահա թե ինչպես է հիշում Մելիքյանին նրա ներսիսյանական սիրելի սաներից մեկը՝ Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ Շարա Տալյանը. «Ես, որպես Սպիրիդոն Մելիքյանի աշակերտ,— գրում է նա,— չեմ կարող առանց երախտագիտության խոր զգացմունքի հիշել նրա անունը։ Մելիքյանը մեծապես նպաստել է իմ երաժշտական զարգացմանը։ Նա ոչ միայն վառ է պահել մանկությունից իմ մեջ բուն դրած սերը դեպի երաժշտությունը, այլև առանձին մի ուժով շարունակ բորբոքել է այն՝ աշխատելով ճիշտ հունով տանել իմ երաժշտական ուսումնառությունը, օգնելով առաջադիմել ու հմտանալ կատարողական արվեստում։

Սպիրիդոն Մելիքյանն էր, որ լիովին արժանի փոխանորդը հանդիսացավ Մակար Եկմալյանի։ Նրա առավելությունն այն էր, որ սիստեմատիկաբար հանդես էր գալիս խմբերգային համերգներով։ Այդ տարիներին երգչախմբային արվեստը պրոֆեսիոնալ բարձրության հասավ շնորհիվ Մելիքյանի անխոնջ աշխատանքի։

Հմայիչ էր Սպ. Մելիքյանը որպես մարդ։ Շատ պարզ էր ու անմիջական։ Նրա այդ պարզությունը հասնում էր մանկական անմեղության։ Գուցե հենց դրանից էր այն մոգական ուժը, որով նա կախարդում և իր հետ էր կապում մեզ բոլորիս»[3]։

Իր երգչախմբով Մելիքյանը մշտապես և սիրով պրոպագանդել է հայ ժողովրդական երգը, կատարել հայ խմբերգային երաժշտության լավագույն նմուշները, մասնավորապես Կոմիտասի խմբերգերը, որ նրա ծրագրերում պատկառելի տեղ էին գրավում։ Խմբավարի և մանկավարժի իր ժրաջան աշխատանքը Ս. Մելիքյանը շարունակեց և շարադրեցրեց 1918—1920 թթ.՝ քաղաքական խառն ու լարված իրադրության պայմաններում, երբ Վրաստանում սանձազերծված էր մենշևիկյան տեռորը։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Մելիքյանը ապրում է սկզբում Էջմիածնում (1921 թվականից), ապա Երևանում (1923 թվականից)։ Նա դառնում է հանրապետության երաժշտական ամենաակտիվ գործիչներից մեկը։ Երևանի նորաստեղծ պետական կոնսերվատորիայում նա ստանձնում է խմբերգային դասարանի ղեկավարությունը, դասավանդում է տեսական առարկաներ, վարում է նաև երգեցողության դասատուների վերապատրաստման դասընթացները։ Նրա ղեկավարած երգչախումբը Երևանի երաժշտասերներին ցուցադրում է իր համերգային նոր ծրագիրը, ելույթներ է ունենում նաև խառն համերգներում։ 1926 թ. հունվարի 28-ին Անգրկենտգործկոմի հերթական նստաշրջանի մասնակիցների համար տրված համերգում ելույթ են ունենում Երևանի կոնսերվատորիայի կատարողական երկու կոլեկտիվներ՝ երգեցիկ խումբը (առաջին բաժնում) և սիմֆոնիկ նվագախումբը (երկրորդ բաժնում)։ Սիմֆոնիկ նվագախումբը ղեկավարում էր Ալ. Սպենդիարյանը, իսկ Ս. Մելիքյանը՝ 75 հոգուց բաղկացած երգչախումբը։ Մամուլը նշել է այդ համերգի բացառիկ հաջողությունը, թե՛ նվագախմբի և թե՛ երգչախմբի կատարողական գովելի մակարդակը։ Այնուհետև, 1927 թ., Սպիրիդոն Մելիքյանի երգչախումբը իր համերգներով մեծ հետաքրքրություն առաջ բե-

---

3 Շարա Տալյան, Դեպքեր, դեմքեր, մտքեր, Երևան, 1973, էջ 42—43։

ընց Մոսկվայում, ուր հրավիրված էր մասնակցելու Մեծ Հոկտեմբերի 10-ամյակի տոնակատարությանը (երգչախմբի հետ Մոսկվա էր մեկնել նաև Վ. Արիստակեսյանի պարային անսամբլը)։

Կատարողական և մանկավարժական աշխատանքին զուգընթաց, այդ տարիներին Մելիքյանն զբաղված էր երաժշտագիտական պրպտումներով, հայ ժողովրդական երգերի հավաքմամբ և ուսումնասիրությամբ։ 1926 թ. նա դառնում է ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամ։ Նա պարբերաբար ազգագրական էքսպեդիցիաներ է կազմակերպում Հայաստանի տարբեր շրջաններում՝ Կոտայք և Ախտա՝ 1926 թ., Թալին, Ապարան և Ստեփանավան՝ 1927 թ., Փամբակ և Հաչիխալիլ՝ 1928 թ., Նոր Բայազետ՝ 1929 թ., Թալին՝ 1932 թ.։ Բացի այդ, նա ժողովրդական երգեր և պարեղանակներ է գրի առնում Էջմիածնում ու Երևանում։ Մելիքյանը հրատարակում է «Վանա ժողովրդական երգերի» երկու պրակները, «Հայ ժողովրդական երգի գամմաները» տեսական ակնարկը, Կոմիտասին նվիրված ուսումնասիրությունները («Կոմիտասի ստեղծագործությունների անալիզը» և «Կոմիտաս» պատմական ակնարկը), աշխատում է «Ուրվագիծ հայ երաժշտության պատմության» գրքի վրա (այն հրատարակվել է ետմահու՝ 1935-ին)։

1930—31 թթ. Սպիրիդոն Մելիքյանը եղել է Երևանի պետական կոնսերվատորիայի դիրեկտորը, 1933-ին արժանացել հանրապետության արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման։ Նա վախճանվեց 1933 թ. մայիսի 4-ին, կյանքի 53-րդ տարում։

* * *

Սպիրիդոն Մելիքյանի երաժշտական գործունեության բոլոր կողմերը, նրա կատարողական, ստեղծագործական և գիտական հետաքրքրությունները անխզելիորեն կապված են եղել հայրենի երաժշտության, հայ ժողովրդական երգի հետ։ Որպես ստեղծագործող նա մշակել է հայ ժողովրդական երգի նմուշներ, որպես մանկավարժ ձգտել է դպրոցում լայն տեղ տալ ժողովրդական երաժշտությանը, որպես խմբավար և երգիչ մշտապես պրոպագանդել է իր ժողովրդի երգարվեստը, որպես ազգագրագետ շարունակել է Կոմիտասի սկսած գործը երաժշտական ֆոլկլորի հավաքման ու ձայնագրման ուղղությամբ, որպես երաժշտագետ ուսումնասիրել է հայրենի երաժշտական արվեստի անցած ճանապարհը, փորձել է բնութագրել ազգային երաժշտական մշակույթի էությունն ու առանձնահատկությունները։

Դժբախտաբար նրա երաժշտագիտական աշխատությունները զերծ չեն եղել մոլորություններից ու ափսոսանքի արժանի սխալներից։ Դրանք արտահայտվեցին օտար ազդեցությունների մասին Մելիքյանի ունեցած սխալ պատկերացումների մեջ, ինչպես և, արդեն սովետական տարիներին՝ երաժշտական մի շարք երևույթների վուլգար-սոցիոլոգիական լուսաբանման մեջ։ Բայց այդուհանդերձ, անկարելի է ժխտել, որ այն ամենը, ինչ զբաղեցրել է Մելիքյանին երկար տարիների ընթացքում, թելադրված է եղել նրա բարենպատակ ձգտումներով, հայ երաժշտական արվեստին ծառայելու, նրա առաջադիմությանը նպաստելու անկեղծ ցանկությամբ։

Վաղ հասակից Մելիքյանը սիրել է հայրենի ժողովրդական երգը։ Այս սերն էլ նրան սկզբից մինչև վերջ ոգեշնչել և անխոնջ աշխատանքի է մղել։ Թե

որքան խորն է եղել հայ ժողովրդական երգի նկատմամբ Մելիքյանի գորովալից սերն ու հետաքրքրությունը մենք տեսնում ենք նրա հետևյալ ասույթից. «Ես, որ եվրոպական ազգերի ժողովրդական երգերով բավական զբաղվելու առիթ եմ ունեցել և հաճախ եմ համեմատության դրել հայկականի հետ, այն եզրակացության եմ եկել, որ հայը իր ժողովրդական երգերով ամենափայլուն տեղերից մեկն է գրավում նրանց շրջանում և պատվով կարող է չափվել նրանց հետ։ Չափազանցություն արած չեմ լինի և ազգային զգացմունքը շոյած, եթե ասեմ, որ այդ ազգերի մեջ մի երգ չգտա, որ այնքան խոր վիշտ արտահայտեր, որքան մեր «Սիրտս նման էր» երգը, և այնպիսի՝ իր կազմությամբ գեղարվեստական զարգացման համաձ, երգ չտեսա նրանց մոտ, ինչպես մեր լոռեցու «Հորովել»-ն է»[4]։

Անդրադառնալով հայրենի ժողովրդական երաժշտության գեղարվեստական արժեքին, նրա ճանաչողական և դաստիարակչական նշանակությանը, Մելիքյանը շեշտում էր ժողովրդի ընդերքում պահպանված երաժշտական գանձերի հավաքման, լայն ուսումնասիրման և շարունակական պրոպագանդայի անհրաժեշտությունը։ «Մենք այն կարծիքին ենք,— գրում էր նա,— որ մեր մատաղ սերնդի ականջին ժողովրդական երգը որքան շատ հնչի, այնքան լավ, որովհետև այդպիսով միջոց տված կլինենք նրան՝ գիտակցորեն թե անգիտակցորեն, հայի ստեղծագործության ինքնուրույն գծերն ըմբռնելու և սիրելու»[5]։

Մելիքյանի՝ հայրենասեր արվեստագետի թողած ազգագրական պատկառելի ժառանգությունը վկայում է, թե նա որքան նվիրված է եղել հայրենի երաժշտական մշակույթի շահերին։ Դեռևս 1917-ին Թիֆլիսում լույս տեսավ Ս. Մելիքյանի և Ա. Տեր-Ղևոնդյանի կազմած արժեքավոր ազգագրական ժողովածուն՝ «Շիրակի երգեր» վերնագրով։ Նախատովետական տարիներից այդ ժողովածուն բացառիկ նշանակություն ձեռք բերեց հայ երաժշտության զարգացման ճանապարհին, հանդիսանալով ազգագրական հավաստի մի աղբյուր, որից հաճախ են օգտվել հայ կոմպոզիտորները՝ իրենց ստեղծագործական տարբեր հղացումներն իրականացնելու ընթացքում։ Բավական է հիշել, որ այդ ժողովածուի նյութերից 10-ից ավելի գրառումներ է օգտագործել Ալ. Սպենդիարյանը՝ իր «Ալմաստ» օպերայում։

«Շիրակի երգերը» լույս տեսան այն ժամանակ, երբ կոմիտասյան ազգագրական գրառումները դեռևս հրապարակում համարյա չկային, ուստի մինչև Կոմիտասի առաջին ժողովածուի հրատարակումը (1931 թ.) «Շիրակի երգերը» տպագրված միակ լիարժեք ազգագրական ժողովածուն էր մեզանում։ Այն պարունակում է 152 գրառում։ Ժողովածուի նյութը հավաքվել է Շիրակի գյուղերում, 1914 թ. հուլիս-օգոստոս ամիսներին։ Երգերի նոտագրումը կատարել է Ս. Մելիքյանը. բացի այդ, նա գրել է ժողովածուի առաջաբանը՝ համառոտ տեղեկություններ տալով էքսպեդիցիայի մասին։ Մելիքյանն այստեղ նշում է, որ ձայնագրված նյութը եզակի մի աղբյուրից չի բխում, այլ ներկայացնում է թե՛ բնիկների և թե՛ Մուշից, Ալաշկերտից, Կարսից, Էրզրումից այստեղ գաղթած հայերի երաժշտական ֆոլկլորը։ Մինիատյուրային հին ու նոր պարերգերի հետ մեկտեղ այս ժողովածուում տեղ են գտել բուն երգային նմուշներ, ինչպես և աշուղական եղանակներ։ Ըստ որում, այստեղ աշուղական եղանակները

---

4 Ս. Մելիքյան, Երաժշտության զարգացման խնդիրը մեզանում, Թիֆլիս, 1909, էջ 38։
5 Նույն տեղում, էջ 30։

կամ խաղերը փաստորեն առաջին անգամ են այդպիսի լայն ընդգրկումով ներկայացվում։ Եվ դա, անշուշտ, կարևոր մի քայլ էր հայ երաժշտության այդ ինքնատիպ ճյուղի ուսումնասիրման ճանապարհին։

Ս. Մելիքյանի հետագա նախաձեռնությունը «Վանա ժողովրդական երգերի» երկու պրակների հրատարակումն էր 1927—28 թթ. (այս ժողովածուի համահեղինակն էր Մելիքյանի աշակերտ Գ. Գարդաշյանը)։ Ի տարբերություն նախորդի, այս ժողովածուն ներկայացնում էր ազգագրական միայն մի շրջանի՝ Վանի ու նրա շրջակայքի երգերն ու պարերգերը։ Այստեղ առանձնապես հետաքրքրական են հին ժամանակներից եկող պարերգերը, որ աչքի են ընկնում ազգային ինքնատիպ բնութագծերով, լադային ուրույն կառուցվածքով։

Սովետական տարիներին մեր հանրապետության տարբեր շրջաններում Մելիքյանի կատարած ազգագրական գրառումները հրատարակվեցին նրա մահից հետո՝ երկու հատորից բաղկացած «Հայ ժողովրդական երգեր և պարեր» ժողովածուում (1949 և 1952 թթ.), Մ. Աղայանի խմբագրությամբ։ Այս ստվար ժողովածուն, որ պարունակում է 533 գրառում, լայն պատկերացում է տալիս 1920-ական թթ. մեր կենցաղում պահպանված գեղջկական երաժշտական ֆոլկլորի մասին։ Ժողովածուում ներկայացված են այսպես կոչված «օբյեկտիվ ֆիքսացիայի» սկզբունքով գրի առնված ժողովրդական երգարվեստի հիմնական ժանրերը՝ աշխատանքային, ծիսական, հարսանեկան, վիպական, սիրային-լիրիկական, օրորոցային և այլ բնույթի երգեր, բազմազան պարերգեր, գործիքային երաժշտության արժեքավոր նմուշներ (ծանր գյոնդի տարբեր տիպեր, քոչարիներ և այլն), աշուղական հին ու նոր եղանակներ։ Ժողովածուի նյութերի մեջ շատ ուշագրավ են սասունցիների հինավուրց և ինքնատիպ պարերգերն ու պարեղանակները։

Իր էքսպեդիցիաների ընթացքում Սելիքյանը զարմանալի հետևողականությամբ և ջանասիրությամբ տարեցտարի հարստացրել է հայ երաժշտական ազգագրության ֆոնդը, այդ աշխատանքում հաղթահարելով շատ ու շատ գրժվարություններ։ Նրա ազգագրական եռանդուն գործունեությանն է իր հուշերում անդրադառնում ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը։ Նա գրում է. «Նվիրելով իր եռանդն ու գիտությունը հայ ժողովրդական երգ-երաժշտության հավաքման, ձայնագրման և ուսումնասիրության աշխատանքներին, Ս. Մելիքյանը մի շարք տարիների գիտարշավների ժամանակ հավաքեց, ձայնագրեց հազարից ավելի երգ-եղանակներ։ Այս բնագավառում նա Կոմիտասից հետո մրցակից չուներ։ Ինչպե՞ս էր սիրում նա մեր երաժշտական ֆոլկլորը, ի՞նչ ոգևորությամբ էր շափշփում մեր գավառներն ու շրջանները, գյուղերն ու ավանները։ Գյուղից գյուղ էր անցնում, սարեր, ձորեր կտրում, համարյա միշտ ոտքով, մի ցուպ ձեռքին, նոտատետրերը, անհրաժեշտ պիտույքներն ու պարագաները շալակին... Հարյուրավոր կիլոմետրեր է կտրել, միայն թե իր նպատակին հասնի, «հետաքրքրական հունձ» անի։ Գիտարշավների ժամանակ նա մի առանձին ոգևորություն էր ապրում։ Դա նրա համար և՛ հանգիստ էր, և՛ սրբազան պարտականություն, և՛ հաճույք։ Թե որքան ծանր պայմաններում է նա կատարել իր այդ հասարակական-հայրենասիրական պարտականությունը,—այդ ամենը գիտեն միայն սակավաթիվ մարդիկ, նրա մտերիմները»[6]։

---

6 Ս. Մելիքյան, Հոդվածներ, հուշեր, նամակներ, փաստաթղթեր, էջ 87։

Բարձր գնահատելով Կոմիտասի և Սպիրիդոն Մելիքյանի թողած ազգագրական ժառանգությունը, պրոֆ. Ք. Քուշնարյանը իր «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր» կապիտալ աշխատության մեջ հետևյալն է ասում. «Հայ գեղջուկ երգի հիմնական հարստությունները հավաքված են Կոմիտասի և Սպիրիդոն Մելիքյանի՝ երաժշտական ֆոլկլորի այդ երկու անխոնջ հետազոտողների աշխատություններում»[7]։

Այս բոլորի հետ մեկտեղ Մելիքյանը հայ իրականության մեջ ճանաչված և գնահատված կոմպոզիտոր էր. որի գործերը ինքնատիպ են իրենց մտահղացմամբ և կրում են հեղինակի ստեղծագործական անհատականության դրոշմը։ Նա երգեր և ռոմանսներ է գրել Ավ. Իսահակյանի և Հովհ. Հովհաննիսյանի բանաստեղծական տեքստերի վրա, հորինել «Գառնուկ ախպեր» մանկական երաժշտական պատկերը, մշակել է բազմաթիվ ժողովրդական երգեր՝ մեներգչի և երգչախմբի համար։ Նրա «Ախթամար» սոնատ-սիմֆոնիկ պոեմը այդ ժանրում ստեղծված երկրորդ գործն է հայ իրականության մեջ՝ Եկմալյանի «Ռոզա» կանտատից հետո։ Հանիրավի մոռացված այդ պոեմը ներկայացնում է գեղարվեստական անվիճելի արժեք և կարող է արժանի տեղ գրավել այժմյան կատարողական երկացանկում։ Առավել ժողովրդականություն են վայելում Մելիքյանի գրած հնչեղ և տպավորիչ խմբերգերը՝ «Ծամթելը», «Պիլիպին», «Թխկոնդան», որոնց մեջ հիանալիորեն է արտացոլված հեղինակի ստեղծագործական իսկական վարպետությունը։ Դրանք պատկանում են հայ խմբերգային գրականության լավագույն նմուշների թվին։

1932 թ. իր աշխատանքային ծրագրում Սպիրիդոն Մելիքյանը նախատեսել էր գրել ժողովրդական բնույթի մի կանտատ՝ նվիրված Մեծ Հոկտեմբերի 15-ամյակին։ Բայց ծանր ու անբուժելի հիվանդությունը նրան զրկեց իր մտահղացումն իրականացնելու հնարավորությունից։

Սպիրիդոն Մելիքյանը լայն ժողովրդականություն վայելող մեր բազմավաստակ երաժիշտներից էր, ջերմորեն սիրված ու հարգված մարդ, որ իր ուրույն տեղն ունի հայ երաժշտության պատմության մեջ։

СПИРИДОН МЕЛИКЯН

(К 100-летию со дня рождения)

А. Г. ТАТЕВОСЯН

(Резюме)

Начало многосторонней деятельности Спиридона Меликяна—старшего ученика Комитаса, одного из создателей армянской профессиональной музыки, относится к первым годам XX в. По примеру своих предшественников М. Екмаляна, Кара-Мурзы, Комитаса С. Меликян

7 Х. Кушнарев, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, стр. 4.

был универсальным музыкальным деятелем, проявив себя как этнограф и композитор, хормейстер и певец, музыковед и педагог. В дореволюционный период Меликян работал в Тифлисе. Он основал там армянское музыкальное общество, руководил хором семинарии Нерсисян. Концерты хора Меликяна пользовались исключительным успехом. После установления Советской власти в Армении С. Меликян переезжает сюда и ведет плодотворную педагогическую, исполнительскую и научную работу, руководит хором Ереванской консерватории, периодически организует этнографические экспедиции в районы республики. Меликян был крупным знатоком армянского музыкального фольклора, продолжателем дела Комитаса в собирании и записи сокровищ армянской народной музыки. Его этнографические сборники («Ширакские песни», «Ванские народные песни», «Армянские народные песни и танцы») представляют большую художественную и научную ценность. Меликян-композитор известен как автор ряда обработок для хора и сольного пения. Особенно популярны его хоровые песни «Цамтел», «Пилипи», «Тхконда».